Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար պարոն Գ. Գուլյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.
Արսեն Նիկոյան, Միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.
Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, քաղաք Պեկին, 2023 թվականի ապրիլի 25-ից մայիսի 11-ը:

3. Հրավիրող կողմը.
Չինաստանի կառավարություն:

4. Գործուղման նպատակը.
Մասնակցություն 2023 թվականի ապրիլի 27-ից մայիսի 10-ը կայնալիք «Կայուն զարգացման՝ 2030 թվականի օրակարգի իրականացում (մաքուր էներգիա) զարգացող երկրների համար» թեմայով դասընթացին:

5. Քննարկված թեմաները, հանդիպումները, ելույթները.
«Կայուն զարգացման՝ 2030 թվականի օրակարգի իրականացում (մաքուր էներգիա) զարգացող երկրների համար» թեմայով դասընթացին Հայաստանի Հանրապետությունից մասնակցում էին նաև տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկու ներկայացուցիչ և մեկ ներկայացուցիչ ներդրումների աջակցման կենտրոնից: Դասընթացին ներգրավված էին նաև Իրաքի, Ուզբեկստանի, Սուդանի, Վենեսուելայի, Շրի Լանկայի, Սիերա Լիոնեի, Հարավաֆրիկյան Հանրապետության, Մյանմարի, Լեսոտոյի և Կոլումբիայի ներկայացուցիչները: Բացման հանդիսավոր արարողությանը, որին մասնակցում էին նաև այլ դասընթացների մասնակիցներ ևս, ողջույնի խոսքով հանդես է եկել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կոմերցիայի նախարարության Միջազգային բիզնեսի պաշտոնյաների ակադեմիայի (Academy for International Buiseness Officials) փոխնախագահը պրն. Չեն Ռունյունը: Կազմակերպիչների նախաձեռնությամբ դասընթացի մասնակիցների կողմից ողջույնի խոսքի հնարավորություն տրամադրվել է նաև ինձ:

Դասընթացի ընթացքում չինական կողմը ներկայացրել է"

- ✓ ընդհանուր ակնարկ Չինաստանի վերաբերյալ,

- ✓ Չինաստանի առաջնորդների հիմնական մոտեցումները կառավարման վերաբերյալ. նոր գաղափարները և նոր ռազմավարությունները,
- ✓ Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն,
- ✓ Չինաստանում մաքուր էներգիայի ներկայիս իրավիճակի և փորձի վերաբերյալ տեղեկատվություն,
- ✓ Չինաստանի տնտեսական զարգացման և բարեփոխումների վերաբերյալ հակիրճ ակնարկ,
- ✓ Ցածր ածխածնային զարգացման ռազմավության չինական փորձն ու քաղաքականությունը, անդրադարձ է կատարվել կայուն զարգացման նպատակներին և անցումային էներգիային,
- ✓ ածխածնի չեզոքության վերաբերյալ չինական կողմի նպատակները. մարտահրավերները և ռազմավարությունը, քաղաքականությունը և գործողությունները:

Դասընթացի ընթացքում ներկայացվել է նաև Կայուն զարգացման՝ 2030 թվականի չինական օրակարգի իրականացումն, ինչպես նաև այցելություն է տեղի ունեցել Ֆուժոուի Պինգտան հողմային էլեկտրոկայան, ներկայացվել են հողմաէլեկտրակայանի աշխատանքներն ու տեխնիկական հնարավորությունները: Այցելություն է եղել նաև Ֆուժոուի «Ruiqian» խեցացի տեխնոլոգիաների ընկերություն, որտեղ ներկայացվել են խեցացի տեխնոլոգիաների կիրառումը տարբեր բնագավառներում, այցելություններ են եղել նաև Պինգտանի համապարփակ փորձարարական քաղաքային պլանավորման ցուցասրահ, ինչպես նաև պատմամշակութային այլ վայրեր:

Արսեն Նիկոյան
16.05.2023թ.